ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

10.11.2026



Սիրելի՛ հայրենակիցներ, տեղական ինքնակառավարման ոլորտի հարգելի՛ ներկայացուցիչներ և գործընկերներ

Այսօր նշում ենք Տեղական ինքնակառավարման մարմինների օրը և մեր երկրում այս ինստիտուտի կազմավորման 30-ամյակը: Ծնորհավորում եմ համայնքների ղեկավարներին, ավագանիների անդամներին, համայնքապետարանների աշխատակազմերին, համայնքային ենթակայության հիմնարկների աշխատակիցներին, ինչպես նաև Սյունիքի մարզպետի աշխատակազմի և պետական այլ կառույցների բոլոր այն մասնագետներին, որոնց ամենօրյա գործունեությունն ուղղված է մեր բնակավայրերի առաջընթացի ապահովմանը:
Ստեղծումից ի վեր համայնքային կառավարումն անցել է կայացման, կառուցվածքային փոփոխությունների և բարեփոխումների տարբեր փուլերով՝ դառնալով պետական կառավարման ժողովրդավարական համակարգի կարևոր բաղադրիչ: Այս երեք տասնամյակը նաև հնարավորություն է գնահատելու անցած ճանապարհը և գիտակցելու, թե որքան մեծ է տեղական իշխանության դերը սեփական բնակավայրին առնչվող հարցերի լուծմանը քաղաքացիների մասնակցությունն ապահովելու գործում:
Միաժամանակ արձանագրենք, որ համայնքային կառավարումը երբեք ավարտուն գործընթաց չէ. այն պահանջում է շարունակական կատարելագործում, ժամանակի մարտահրավերներին համարժեք լուծումներ և հանրային անսասան վստահություն:
Ընտրությունների միջոցով քաղաքացիներն իրացնում են սեփական համայնքի իշխանություն ձևավորելու իրենց իրավունքը, սակայն բնակչի մասնակցությունը քվեարկության օրով չի սահմանափակվում: Համայնքը զարգանում է այնտեղ, որտեղ քաղաքացին ներգրավվում է հանրային քննարկումներում, բարձրաձայնում է խնդիրները, ներկայացնում առաջարկներ և սրտացավ է ընդունվող որոշումների նկատմամբ:
Սյունիքի բնակավայրերի տարբերվող պայմաններն ու կարիքները պահանջում են նպատակային մոտեցում, տեղական առանձնահատկությունները հաշվի առնող որոշումներ և առկա ներուժի արդյունավետ օգտագործում: Այս համատեքստում կարևոր փոփոխություն էր 2026 թվականին իրականացված վարչատարածքային վերակազմավորումը. նախկին Գորիս, Տաթև և Տեղ համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է ընդլայնված Գորիս համայնքը: Խոշորացումը սոսկ վարչական սահմանների վերագծում չէ, այլ կառավարման կարողություններն ու ռեսուրսները մեկտեղելու, խնդիրներն առավել համակարգված լուծելու և բնակավայրերի համաչափ զարգացման համար լայն հնարավորություններ ստեղծելու գործիք:
Համայնքային կյանքի առաջընթացը միայն համայնքի ղեկավարի կամ ավագանու ուսերին դրված պարտականություն չէ: Այն պահանջում է տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կառույցների, մասնավոր հատվածի, քաղաքացիական հասարակության և բնակիչների ներդաշնակ աշխատանք: Ծրագրերի ճիշտ համադրմամբ և լիազորությունների հստակ իրականացմամբ մենք կարող ենք ամրապնդել մեր բնակավայրերը, քանի որ Սյունիքի և ողջ երկրի կայունությունը սկսվում է կենսունակ համայնքից:

Հարգելի՛ գործընկերներ, շնորհակալություն եմ հայտնում նվիրումի և պատասխանատու աշխատանքի համար: Բոլորիդ անսպառ ուժ ու եռանդ եմ մաղթում, իմաստություն և հետևողականություն՝ համայնքային խնդիրները լուծելու գործում:
Թող ձեր նախաձեռնություններն ու նոր ծրագրերն իրականություն դառնան բնակիչների ամուր վստահության և աջակցության պայմաններում:
Խաղաղություն, բարեկեցություն և շարունակական առաջընթաց Սյունիքի բոլոր համայնքներին: